ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«08» սեպտեմբերի 2020 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բաղալյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 25 (քսանհինգ) անդամներ՝

Ս.Բալասանյանը, Ա.Ադամյանը, Հ.Կարապետյանը, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյան, Տ.Փանոսյանը, Վ.Եդիգարյանը, Ա.Գրիգորյանը, Կ.Միքայելյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Ս.Աստոյանը, Ա.Խաչատրյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Սարգսյանը, Ս.Մարտիրոսյանը, Լ.Բարսեղյանը, Ա.Վարդանյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Խաչատրյանը, Գ.Մաթևոսյանը, Հ.Պողոսյանը, Ա.Ղարաղազարյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բաղալյանը:

ԼՍԵՑԻՆ.

1. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 21

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական իններորդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 21
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ստեղծել ավագանու չորս անդամից բաղկացած ժամանակավոր հաշվիչ հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով):
2. Հաստատել հանձնաժողովի հետևյալ կազմը՝
   1) Հասմիկ Լևոնի Եղիազարյան - «Հայկական Վերածնունդ» խմբակցություն,
   2) Սուսաննա Հովհաննեսի Աստոյան- «Բարգավաճ Հայաստան» խմբակցություն,
   3) Կարեն Ժորայի Միքայելյան - «Բալասանյան» խմբակցություն,
   4) Արտյոմ Հակոբի Ղարաղազարյան– ավագանու անկախ անդամ:
3. Սահմանել, որ հանձնաժողովն իր լիազորությունները պահպանում է մինչև ավագանու հաջորդ հերթական նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը:

ԼՍԵՑԻՆ.

3. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 234-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

Համայնքի ավագանու անդամներ Լուսինե Սանոյանը, Լևոն Բարսեղյանը և Արման Գրիգորյանը քվեարկությանը մասնակցեցին օրակարգի 3-րդ հարցից:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի §Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին¦ N 234-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն համապատասխանաբար NN 1,2,3 հավելվածների:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ**

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՍՈՒԲՍԻԴԻԱ ԵՎ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գույքի և վառելափայտի ձեռքբերման, ընթացիկ վերանորոգման, անհրաժեշտ այլ ծախսերի կատարման համար Գյումրի համայնքի թվով 1 (մեկ) կազմակերպությանը հատկացնել՝ սուբսիդիա **250 000** (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ և նվիրատվություն **930 000** (ինը հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ թվով 7 (յոթ) կազմակերպությունների՝ նվիրատվություն **5 579 000** (հինգ միլիոն հինգ հարյուր յոթանասունինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումները կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 8/1/1, 8/2/2 և 8/2/3 գործառական դասակարգման (4511) «Սուբսիդիաներ համայնքային կազմակերպություններին» և (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածներից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 11 (ՏԱՍՆՄԵԿ) ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

Համայնքի ավագանու անդամ Տիգրան Փանոսյանը քվեարկությանը մասնակցեց օրակարգի 5-րդ հարցից:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի թվով 11 (տասնմեկ) համատիրություններին իրենց կողմից սպասարկվող և Գյումրի համայնքում 2020 թվականի հուլիսի 13-ին տեղացած հորդառատ անձրևի և կարկուտի հետևանքով տուժած բազմաբնակարան շենքերի վերանորոգման նպատակով հատկացնել սուբսիդիա՝ 4 824 500 (չորս միլիոն ութ հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 6/6/1 գործառական դասակարգման (4521) ‹‹Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական

կազմակերպություններին›› տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ««ԿՈՒՄԱՅՐԻ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Կազմակերպության կազմում բացվող ցուցասրահի համար երաժշտական գործիք ձեռք բերելու նպատակով հատկացնել 516 250 (հինգ հարյուր տասնվեց հազար երկու հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 8/2/2 գործառական դասակարգման (4511) «Վարչական սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. **ՍՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՆԿԻԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ կազմակերպության խոհանոցի գույքի ձեռքբերման համար:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. **ԼԻԲԱՆԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԲԵՅՐՈՒԹՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՅԹՅՈՒՆԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺԱԾ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. «Հայաստան» համահայկական հիմնադրամին որպես նվիրատվություն հատկացնել 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում տեղի ունեցած պայթյունի հետևանքով տուժած լիբանանահայերին օգնություն ցուցաբերելու համար:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. **ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 141 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ՔԱՌԱՍՈՒՆՄԵԿ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 141 (մեկ հարյուր քառասունմեկ) անձանց որպես դրամական օգնություն կանխիկ հատկացնել 1 710 000 (մեկ միլիոն յոթ հարյուր տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԳԱՅԱՆԵ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Գայանե Իսահակյանի ընտանիքին որպես դրամական օգնություն հատկացնել՝ 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

11. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Սոսի Գրիգորյանի ընտանիքին որպես դրամական օգնություն հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱԻԴԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Աիդա Գրիգորյանի ընտանիքին որպես դրամական օգնություն հատկացնել՝ 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԲԱԳՐԱՏ ՕՀԱՆՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Հարցի հեղինակի կողմից ներկայացված նախագծով Բագրատ Օհանյանին որպես դրամական օգնություն հատկվելու էր 300000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Սակայն հաշվի առնելով բռնցքամարտի միջազգային կարգի սպորտի վարպետի վաստակը, նրա մոտ հայտնաբերված եզակի հիվանդության հաղթահարման բարդությունները, Գյումրի համայնքի ավագանու անդամներն առաջարկեցին իրենց իսկ կողմից ընդունված 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի համար անել բացառություն և թանկարժեք բուժում ստանալու նպատակով Բագրատ Օհանյանին որպես դրամական օգնություն հատկացնել 1 250 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Կատարել բացառություն Կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջների և Բագրատ Օհանյանին որպես դրամական օգնություն հատկացնել 1 250 000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՌԿԱ

ՖԻԶԻԿԱՊԵՍ ՄԱՇՎԱԾ ԳՐՔԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Թույլատրել կազմակերպության հաշվեկշռում առկա ֆիզիկապես մաշված գրքերի դուրսգրումը:
2.Գույքի դուրսգրման գործընթացի կազմակերպումը և դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը վերապահել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտով ստեղծվելիք հանձնաժողովին:
3.Դուրսգրված գրքերի՝ օրենքով սահմանված կարգով հնարավոր վաճառքից ստացված ֆինանսական միջոցները մոտքագրել Գյումրի համայնքի բյուջե, միջոցների բաշխումը (ծախսման ուղղությունները) վերապահել համայնքի ղեկավարին:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԱՐՍԵՆ ՌՈՒԲԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՈՐՊԵՍ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Աբովյան փողոցի թիվ 3 հասցեի անշարժ գույքին հասցվելիք վնասների փոխհատուցման նպատակով դրամական միջոցներ հատկացնելուն:
2. Հատկացվելիք դրամական միջոցների չափ սահմանել 4 000 000 (չորս միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հանձնարարել Գյումրի համայնքի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված գումարը հատկացնել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/6/1 գործառական դասակարգման (4728) «Բնակարանային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻՆ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԵՎ ՊԱՀԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ. ՄԱՆԱՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 19
դեմ – 0
ձեռնպահ – 4 (Ս.Աստոյան, Ա.Խաչատրյան, Ա.Մխիթարյան, Ռ.Սարգսյան**)**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածքում ընտանի կենդանիներին հաշվառելու և պահելու կանոններ՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Կ.ՄԱՆԱՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի տարածքում սանիտարական մաքրման և աղբահանության սխեման համաձայն NN 1-5 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

Տիգրան Փանոսյանն ու Արման Գրիգորյանը չմասնակցեցին 16-րդ և 17-րդ հարցերի քվեարկությանը:

ԼՍԵՑԻՆ.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 06-Ի N 76-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ N 4-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 06-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի թվով 10 (տաս) համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N 76-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելված N 4-ի՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Գյումրի համայնքի «Յուրի Վարդանյանի անվան ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրություն», 3-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) «Իսահակյան 6» բառը և թիվը փոխարինել «Լազոյի 4/2» բառով և թվով,
2) «3103» թիվը փոխարինել «3114» թվով:

2. Որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 1 (Ա.Գրիգորյան)

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և սահմանել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՆԱՆՈՒԼԻԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17072020-08-0027) Կոշտոյան փողոց N 5 հասցեի 712,69 (յոթ հարյուր տասներկու ամբողջ վաթսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով մանկապարտեզը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված բնակավայրերի նպատակային նշանակության հողերի, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,274788 (զրո ամբողջ երկու հարյուր յոթանասունչորս հազար յոթ հարյուր ութսունութ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասն անհատույց օգտագործման իրավունքով 25 (քսանհինգ) տարի ժամկետով տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյուրմրի համայնքի «Նանուլիկ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ որպես նախակրթարան օգտագործելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵՎԻԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Լազոյի փողոց N 1 մանկապարտեզից առանձնացված (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 16052019-08-0039) Լազոյի փողոց N 4/1 հասցեի 1169,27 (հազար հարյուր վաթսունին ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով մանկապարտեզը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված բնակավայրերի նպատակային նշանակության հողերի, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,452788 (զրո ամբողջ չորս հարյուր հիսուներկու հազար յոթ հարյուր ութսունութ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասն անհատույց օգտագործման իրավունքով 25 (քսանհինգ) տարի ժամկետով տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Արևիկ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ որպես նախակրթարան օգտագործելու նպատակով, իսկ 30,92 (երեսուն ամբողջ ինսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հարթակը թողնել ընդհանուր օգտագործման՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ N 5/14 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ «ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Գարեգին Նժդեհի փողոց N 5/14 հասցեի 0,03304 (զրո ամբողջ երեք հազար երեք հարյուր չորս հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասը 20 (քսան) տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել «Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց»

փակ բաժնետիրական ընկերությանը՝ ավտոկայանատեղի կազմակերպելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԻՎԱՆՈՒ ՓՈՂՈՑ N 50 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ «ԿԱԼԳ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29062012-08-0141) Ջիվանու փողոց N 50 հասցեի 109,47 (մեկ հարյուր ինն ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր թանգարանը, 6,24 (վեց ամբողջ քսանչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով օժանդակ կառույցը և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցված բնակավայրերի նպատակային նշանակության հողերի խառը կառուցապատման գործառնական նշանակության 0,01888 (զրո ամբողջ մեկ հազար ութ հարյուր ութսունութ հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը 20 (քսան) տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «ԿԱԼԳ» երիտասարդական հասարակական կազմակերպությանը՝ «Էմիլ Գազազ» ցուցասրահ-թանգարան կազմակերպելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ՝ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ՖՐԻԴ ՍՈՂՈՅԱՆԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ-ՑՈՒՑԱՍՐԱՀԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ենթակայության՝ քանդակագործ Ֆրիդ Սողոյանի հուշատուն-ցուցասրահ և այդ նպատակի համար հատկացնել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 14072014-08-0014) Սերգեյ Համբարձումյան փողոց N 35 հասցեի 332,75 (երեք հարյուր երեսուներկու ամբողջ յոթանասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով նախկին գրադարանի շենքը և շենքի պահպանման ու սպասարկման

համար զբաղեցված 0,051642 (զրո ամբողջ հիսունմեկ հազար վեց հարյուր քառասուներկու միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը:

2.Համայնքային ենթակայության քանդակագործ Ֆրիդ Սողոյանի հուշատուն-ցուցասրահի ստեղծման, հատկացված շենքի վերանորոգման, օգտագործման պայմաններն ու պահանջները մանրամասնել համայնքի ղեկավարի որոշումներով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N 118-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի հուլիսի 11-ի N 105-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գործարանային փողոց N 2/6 հասցեի շինությունները «Հայաստան» համահայկական հիմնադրամին անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին» N 118-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

3.

ԼՍԵՑԻՆ.

26.. «ՖՐԱՆԿ ՄՅՈՒԼԼԵՐ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 08062018-08-0004) Գործարանային փողոց N 2/6 հասցեի 4658,07 (չորս հազար վեց հարյուր հիսունութ ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցված բնակավայրերի նպատակային նշանակության հողերի բնակելի գործառնական նշանակության 0,1432 (զրո ամբողջ մեկ հազար չորս հարյուր երեսուներկու տասհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը 50 (հիսուն) տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Ֆրանկ Մյուլլեր» ընկերությանը՝ բնակարանային ֆոնդով և անհրաժեշտ ենթակառուցվածքներով բազմապրոֆիլ արհեստագործական համալիրի վերածելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

27. «ԱՐՄՈՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. «Արմոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասեր՝ համաձայն հավելվածի:
2. Հողամասերը կառուցապատման իրավունքով օգտագործման ժամկետ սահմանել 1(մեկ) տարի, որից 6 (վեց) ամիս՝ նախագծման, 6 (վեց) ամիս՝ շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:
3. Հողամասի կառուցապատման իրավունքով օգտագործման տարեկան վարձավճար սահմանել տրամադրվող հողամասի կադաստրային արժեքի 1 (մեկ) %-ի չափով:
4. Կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրման հողամասերը չեն կարող դառնալ գրավի առարկա կամ փոխանցվել երրորդ անձանց օգտագործմանը:
5. Հավելվածում ներառված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում գտնվող հողամասերը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու համար դիմել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացնելու համար:
6. Ծրագրի իրականացումը փոխըմբռման հուշագրով ամրագրված ժամանակացույցին համապատասխան ընթացք ունենալու դեպքում՝ վերանայել կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասերի օգտագործման ժամկետները՝ երկարաձգման նկատառումով:
7. Նախագծմանը և շինարարական աշխատանքներին, հողօգտագործմանը ներկայացվող պայմանները, պահանջները և ծրագրի իրականացման հետ առնչվող այլ հարցերը կարգավորվորել Գյումրի համայնքի ղեկավարի որոշումներով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի գործառնական նշանակության փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:
2. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը արտացոլել Գյումրի համայնքի գլխավոր հատակագծում և ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

29. ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐ ԳԱՌՆԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ 5254,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՉԳՐԱՆՑՎԱԾ 2670,3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐ ԳԱՌՆԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 21

դեմ – 0

ձեռնպահ – 3 (Լ.Բարսեղյան, Ա.Վարդանյան, Ա.Գրիգորյան)

Գրիգոր Գրիգորյանը չմասնակցեց 29-րդ հարցի քվեարկությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Վերականգնել քաղաքացի Գրիգոր Գառնիկի Գրիգորյանին սեփականության իրավունքով հատկացված, սակայն պետական գրանցում չստացած Կոմիտասի փողոց N 51/2 հասցեի 2670,3 (երկու հազար վեց հարյուր յոթանասուն ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի հողհատկացման հիմքերը և նշված հողամասը սեփականության իրավունքով հատկացնել Գրիգոր Գառնիկի Գրիգորյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գրիգոր Գառնիկի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

30. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ N 82/2 ՀԱՍՑԵԻ 47,2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Քաղաքացի Յուրիկ Օնիկի Խնկոյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Տերյան փողոց N 82/1 հասցեի տան հողամասի ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի միջոցով օտարել տանը կից, Տերյան փողոց N 82/2 հասցեի 47,2 (քառասունյոթ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 1914 (մեկ հազար ինը հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1,0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց,

ընդամենը՝ 90341 (իննսուն հազար երեք հարյուր քառասունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Յուրիկ Օնիկի Խնկոյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ N 26/12 ՀԱՍՑԵԻ 65,1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԻՍԱՓՈՒԼ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Քաղաքացիներ Կարեն Գարեգինի Մարտիրոսյանին (1/2 մաս) և Դավիթ Գարեգինի Մարտիրոսյանին (1/2 մաս) ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N26/10 հասցեի կիսափուլ հանրակացարանին հարակից Գարեգին Նժդեհի փողոցի N 26/12 հասցեի համայնքապատկան, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 65,1 (վաթսունհինգ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ կիսափուլ հանրակացարանի ընդլայնման նպատակով:
2. Հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 1914 (մեկ հազար ինը հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1,0 քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 124601 (մեկ հարյուր քսանչորս հազար վեց հարյուր մեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Կարեն Գարեգինի Մարտիրոսյանին և Դավիթ Գարեգինի Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԶԵՄԼՅԱՆԿԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՃԱՇԱՐԱՆԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մայր Հայաստան» հուշահամալիրին հարող տարածքում «Զեմլյանկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) սեփականության իրավունքով պատկանող ճաշարանի պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 317,21 (երեք հարյուր տասնյոթ ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը 20 (քսան) տարի ժամկետով վարձակալության տրամադրել ընկերությանը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի վարձավճարի չափ սահմանել տարեկան 317210 (երեք հարյուր տասնյոթ հազար երկու հարյուր տասը) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի վարձակալությանպայմանագիր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերության տնօրենին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ N 62/2 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 28082020-08-0024) Գորկու փողոց N 62/2 հասցեի 0,006284 (զրո ամբողջ վեց հազար երկու հարյուր ութսունչորս միլիոներորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը տրամադրել մրցույթով կառուցապատման իրավունքով 50 (հիսուն) տարի ժամկետով՝ աստիճաններ կառուցելու նպատակով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 70000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՉԵՐՔԵԶԻ ՁՈՐ N 2/3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 22

դեմ – 0
ձեռնպահ – 3 (Լ.Բարսեղյան, Ա.Վարդանյան, Ա.Գրիգորյան)
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 02092020-08-0052) Չերքեզի ձոր N 2/3 հասցեի 0,504535 (զրո ամբողջ հինգ հարյուր չորս հազար հինգ հարյուր երեսունհինգ միլիոներորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0237-0011) տրամադրել մրցույթով կառուցապատման իրավունքով 50 (հիսուն) տարի ժամկետով՝ օգտագործման հանգստի գոտի կազմակերպելու նպատակով:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 253000 (երկու հարյուր հիսուներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

35. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի N 34-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի մարտի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում Գյումրի-2 սոցիալական ծառայությունների տարածքային բաժնի տեղակայման նպատակով անշարժ գույք վարձակալելուն համաձայնություն տալու մասին» N 34-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունն ու լրացումը.

2) որոշման 1-ին կետում «56000 (հիսունվեց հազար)» թիվն ու բառերը փոխարինել «112000 (մեկ հարյուր տասներկու հազար)» թվով և բառերով:
3) որոշման 1-ին կետում վարձավճարով բառից հետո լրացնել «2020 թվականի հուլիս ամսից» բառերը:

2.Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում Գյումրի-2 սոցիալական ծառայությունների տարածքային բաժնի պետին՝ օրենքով սահմանված կարգով կնքել անշարժ գույքի վարձակալության պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

36. «ԳՅՈՒՄՐԻՆ ԱՌԱՆՑ ՏՆԱԿՆԵՐԻ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ «ՔԵԶ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ նախնական համաձայնություն «Գյումրին առանց տնակների» հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) կողմից ներկայացված «Քեզ համար» ծրագրի իրականացմանը:

2.Առաջարկել Գյումրի համայնքի ղեկավարին.

1) հիմնադրամի հետ կնքել համագործակցության պայմանագիր,
2) հիմնադրամի հետ համատեղ ուսումնասիրել և կազմել ծրագրի նախագծման առաջադրանք,
3) ուսումնասիրել ծրագրի իրականացման համար առաջարկվող հողամասի տրամադրման հնարավորությունները, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխանությունը:

3.Տարածքի վերջնական ընտրության և դա քաղաքի տարածքային զարգացման քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներին համապատասխանեցնելուց, տարածքի տրամադրման հնարավորությունը ճշտելուց հետո՝ ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

37. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԱՇԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՓՈՂՈՑ NN 2/2, 2/4, 2/5 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԸ, ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՆՇՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐՈՒՄ ՓԱՍՏԱՑԻ ԲՆԱԿՎՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներ № 17032020-08-0055, № 17032020-08-0056 և № 17032020-08-0057) Սաշա Գրիգորյան փողոց NN 2/2, 2/4, 2/5 հասցեներում գտնվող բնակելի տները, շենք-շինությունները և դրանց զբաղեցրած սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ հողամասերն անհատույց սեփականության իրավունքով հանձնել նշված

բնակելի տներում փաստացի բնակվող բնակիչներին՝ համաձայն № 1 և № 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

38. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ 13-ՐԴ ՓՈՂՈՑ 11 Ա ՇԵՆՔ, ԹԻՎ 9 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵԴԱ ՂԱԶԱՐԻ ԶԱՐԻՖՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՎ- ԲԵՐԴ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 25

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Տալ համաձայնություն Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Անի թաղամաս 13-րդ փողոց 11[Ա] շենք, թիվ 9 հասցեի 57,48 (հիսունյոթ ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը (այսուհետ՝ բնակարան) քաղաքացի Սեդա Ղազարի Զարիֆյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի համայնքի Սև-Բերդ թիվ 1 հասցեի 109,9 (մեկ հարյուր ինն ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տան (այսուհետ՝ բնակելի տուն) և 6,9 (վեց ամբողջ ինը տասնորդական) քառակուսի մետր մակերեսով օժանդակ շինության (այսուհետ՝ օժանդակ շինություն) հետ փոխանակելուն:
2. Համաձայն «Ա.Գ.ԷՍԹԵՅԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի մարտի 20-ի թիվ 03202014 անշարժ գույքի գնահատման հաշվետվության՝ բնակելի տան և օժանդակ շինության շուկայական արժեքը կազմել է 5400000 (հինգ միլիոն չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ «Ա.Գ.ԷՍԹԵՅԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի փետրվարի 26-ի թիվ 08262011 անշարժ գույքի գնահատման հաշվետվության՝ բնակարանի շուկայական արժեքը կազմել է 5210000 (հինգ միլիոն երկու հարյուր տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Օրենքով սահմանված կարգով կնքել բնակելի տունը և օժանդակ շինությունը բնակարանի հետ փոխանակության մասին պայմանագիր:
4. Անհամաչափությունը վերացնելու նպատակով Սեդա Ղազարի Զարիֆյանին հատուցել 190000 (մեկ հարյուր իննսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
5. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման չորրորդ կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020թվականի բյուջեի 10/6/1 գործառնական դասակարգման (4728) «Բնակարանային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացի Սեդա Ղազարի Զարիֆյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

39. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 25
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստի գումարման օր և ժամ սահմանել 2020 թվականի հոկտեմբերի 9-ը՝ ժամը՝ 12:00:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Ս. Բալասանյան _____

Ա. Ադամյան _____

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Խաչատրյան _____

Ռ. Սարգսյան _____

Ա. Մխիթարյան _____

Ս.Մարտիրոսյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա.Վարդանյան _____

Ա. Գրիգորյան _____

Ա. Խաչատրյան _____

Գ. Մաթևոսյան _____

Ա. Ղարաղազարյան _____

Հ.Պողոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

քաղաք Գյումրի
«08» սեպտեմբերի 2020 թվական